ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » հունիսի 2025թ. № 110-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0017-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, հիմք ընդունելով Նունե Ռոբերտի և Նադեժդա Ռոբերտի Բալայանների լիազոր անձ Հրանտ Մարտիրոսի Մաշումյանի կողմից ներկայացրած դիմումը, 05.06.2025թ. տրված թիվ 1481 և 1483 գրանցամատյաններով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, «Սամվել Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել Լոռու մարզ Լոռի Բերդ համայնք գյուղ Լոռի Բերդ 06-044-0017-0015 կադաստրային ծածկագրում գտնվող 0.26325 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0017-0015 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը 0.26325 հա;

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «Սամվել Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Համաձայն «Սամվել Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից 09.06.2025թ. տրված եզրակացության 06-044-0017-0015 կադաստրային ծածկագրով 0.26325 հա մակերեսով հողամասում նշված թիվ 001 ծածկագրի բնակելի տունը քանդված է:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.26325 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով վերահատկացնել Նունե Ռոբերտի Բալայանին՝ 1/2 բաժնեմասով, և Նադեժդա Ռոբերտի Բալայանին՝ 1/2 բաժնեմասով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

Կատ՝ Լ. Սամսոնյան
Հեռ. 098289292

2025թ. հունիսի 11
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12» հունիսի 2025թ. № 111-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի38-րդ հոդվածի1-ին մասի7-րդ, 8-րդ կետերի և «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 25.12.2024թ. թիվ 80-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետի՝

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի 2025թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. 01-01-01դասակարգմամբ«կառավարման ապարատ» նախահաշվում 4111 հոդվածից պակասեցնել 3.000.000 (երեք միլիոն) դրամով և ըստ եռամսյանների սահմանել հետևյալ չափերով.
2-րդ եռամսյակ – 56.654.200 հիսունվեց միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր) դրամ,
3-րդ եռամսյակ – 88.381.300 (ութսունութ միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար երեք հարյուր) դրամ,
4-րդ եռամսյակ – 106.389.400 (հարյուրվեց միլիոն երեք հարյուր ութսունինը հազար չորս հարյուր) դրամ:
1.2. 04-02-01դասակարգմամբ«գյուղատնտեսություն» նախահաշվում 4264 հոդվածը ավելացնել 3.000.000 (երեք միլիոն) դրամով և ըստ եռամսյանների սահմանել հետևյալ չափերով.
2-րդ եռամսյակ – 15.000.000 (տասնհինգ միլիոն) դրամ,
3-րդ եռամսյակ – 15.000.000 (տասնհինգ միլիոն) դրամ,
4-րդ եռամսյակ – 15.000.000 (տասնհինգ միլիոն) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

2025թ. հունիսի 12
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունիսի 2025թ., թիվ 112-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 06-009-0038-0021 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Ագարակ, 15-րդ փողոց, թիվ 26 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2025թ. հունիսի 13
գ. Լոռի Բերդ